11027.

# ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ 1941 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՌԱԶՄ-ՖԻԶԿՈՒԼՏ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ

# ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ЗКНОП
П-62

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ
ԵՐԵՎԱՆ 1940

ЗКҮОП
Դ-62

24 SEP 2006
12 DEC 2009

796/07

ТССР дөвлет китапханасы
ГОСБИБЛИОТЕКА ТССР
Инв. № 2295

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ 1941
ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՌԱԶՄ-ՖԻԶԿՈՒԼՏ
ՄՐՑՈՒՄՆԵՐԻ

# ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ՀԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ
ԵՐԵՎԱՆ 1940

22 JUL 2013

11027

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-ում ԵՐՎ
Ա. Ա. Մ...
Ս ՑՍԱՆԻՍՏԱՆ

43405-63

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ 1941 ԹՎԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՌԱԶՄ-ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

*Պիոներների և դպրոցականների համամիութենական ռազմ-ֆիզկուլտուրային մրցումներն անցկացնում են Համ. ԼԿԵՄ Կենտկոմը, ՀԱՄԿՄ-ը, ՌՍՖՍՌ-ի Լուսժողկոմատը, ՍՍՌՄ Պաշտ-Ավիաքիմի Կենտխորհուրդը, ՍՍՌՄ Ժողկոմսովետին կից ֆիզկուլտուրայի ու սպորտի գործերի Համամիութենական կոմիտեն և ՍՍՌՄ Կարմիր Խաչի ու Կարմիր Մահիկի ընկերությունների Միության Գործկոմը:*

### I. ՄՐՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1. Լայն ծավալել ու բարելավել ռազմ-ֆիզկուլտուրային մասսայական աշխատանքը դպրոցներում ու պիոներական ջոկատներում:

2. Պիոներների ու դպրոցականների մեջ պատվաստել ռազմական և ֆիզկուլտուրային անհրաժեշտ ունակություններ:

3. Պիոներներին և դպրոցականներին նախապատրաստել, որ հանձնեն «Պատրաստ Աշխատանքի Պաշտպանության», «Պատանի Վորոշիլովյան Հրաձիգի», «ՊԱՄՊ»-ի, «ՀՕՔՊ»-ի կրծքանշանների նորմաները:

### II. ՄՐՑՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Ռազմ-ֆիզկուլտուրային մրցումներին կարող են մասնակցել 5—10 դասարանների այն բոլոր պիոներներն ու դպրոցականները, որոնք ուսման մեջ վատ դնահատական չունեն:

2. Մրցումներն անցնում են երկու խմբով. առաջին խումբ՝ 5, 6, 7 դասարանների աշակերտները, երկրորդ խումբ՝ 8, 9, 10 դասարանների աշակերտները:

3. Մրցումները կատարվում են հրաձգությունից, տեղագրությունից և կապից, ՀՕԲՊ-ից, ՊԱՍՊ-ից և Ֆիզկուլտուրայից, յուրաքանչյուր տեսակից առանձին: Բացի դրանից, բոլոր մասնակցողները հանձնում են շարային նախապատրաստության նորմատիվները և մասնակցում են Ֆիզկուլտ-մրցումներին հատուկ ծրագրերով:

4. Դպրոցական մրցություններին մասնակցում են պիոներական ջոկատներից և դասարաններից առաջադրված կոմանդաները, ինչպես և կարող են մասնակցել առանձին աշակերտներ այնտեղ, ուր կոմանդաներ չեն կազմակերպված:

5. Միջդպրոցական մրցություններին լավագույն արդյունքներ ցույց տված պիոներներն ու դպրոցականները միացվում դարձվում են 52 հոգուց բաղկացած ջոկատներ, շրջանային մրցումներին մասնակցելու համար: Ջոկատը կազմակերպված է լինում 10 կոմանդայից, հետևյալ կազմով.

ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻՑ

Հրաձիգների կոմանդա՝ 4 հոգի:

Ֆիզկուլտուրնիկների կոմանդա՝ 10 հոգի (5 աղջիկ, 5 տղա):

ՀՕԲՊ-ի կոմանդա՝ 4 հոգի:

ՊԱՍՊ-ի կոմանդա՝ 4 հոգի:

Տեղագրության և կապի կոմանդա՝ 4 հոգի:

ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻՑ

Հրաձիգների կոմանդա՝ 4 հոգի:

Ֆիզկուլտուրնիկների կոմանդա՝ 10 հոգի (5 աղջիկ, 5 տղա):

ՀՕԲՊ-ի կոմանդա՝ 4 հոգի:

ՊԱՍՊ-ի կոմանդա՝ 4 հոգի:

Տեղագրության և կապի կոմանդա՝ 4 հոգի:



6. Շրջանային մրցումների համար ընտրվում են այն մասնակիցները, որոնք լավագույն տեղեր են գրավել հրաձգությունից, ֆիզկուլտուրայից, ՀՕԲՊ-ից, ՊԱՍՊ-ից, կապից ու տեղագրությունից և կազմակերպում են կոմանդաներ ըստ մրցությունների տեսակների, իսկ կոմանդաները դարձվում են շրջանային ջոկատ, մարզային, երկրային և ավտոնոմ ռեսպուբլիկաների մրցություններին մասնակցելու համար:

7. Ռեսպուբլիկական մրցություններին մասնակցում են մարզային, երկրային և ավտոնոմ ռեսպուբլիկաների ջոկատները, կոմպլեկտավորված մարզային, երկրային և ավտոնոմ ռեսպուբլիկաների լավագույն մասնակցողներից:

Մարզային, երկրային և ավտոնոմ ռեսպուբլիկաների մրցություններում ջոկատների կազմը նույնն է, ինչ որ շրջանայինը—52 հոգի:

8. Համամիութենական ռազմ-ֆիզկուլտուրայի մրցություններին մասնակցում են միութենական ռեսպուբլիկաների ջոկատները:

Ընդամենը մի ռեսպուբլիկայից Համամիութենական մրցումներին մասնակցում են 57 հոգի՝ 52 հոգի մրցություններին մասնակցող, ջոկատի հրամանատար, 2 հրահանգիչ ռազմական մասնագիտություններից և 2 ֆիզկուլտ հրահանգիչ:

Մասնակցողների կազմը, հրամանատարը և ջոկատի հրահանգիչներին հաստատում է միութենական ռեսպուբլիկայի կազմկոմիտեն:

9. Լրիվ հաշվետվություն միջդպրոցական, շրջանային, մարզային և ռեսպուբլիկական (բացի ՌՍՖՍՌ-ից) մրցությունների մասին ուղարկվում են Համամիութենական կազմկոմիտեն, ռեսպուբլիկական մրցությունների ավարտումից 5 օր հետո: Նյութեր ուղարկվում են նաև այն դպրոցի մասին, որը ռազմ-ֆիզկուլտ աշխատանքում և մրցություններում առաջին տեղը կգրավի (մարզերում, երկրում):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — ՌՍՖՍՌ մրցությունների

մասին՝ միջզորոցական, շրջանային, մարզային երկրային և ավտոնոմ ռեսպուբլիկաների, հաշվետվություններ ուղարկվում են Համամիութենական կազմկոմիտեն, մարզային, երկրային, ավտոնոմ ռեսպուբլիկաների մրցությունները ավարտելուց 5 օր հետո, հաշվետվության հատուկ ձևով:

10· Մրցումները կատարվում են առանց աշակերտներին դպրոցական պարապմունքներից կտրելու: Մարզային և երկրային մրցումները կատարվում են հեռակա կարգով:

## III· ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1· Միջզորոցական մրցությունները կատարելու համար դպրոցում կազմակերպվում է 5—7 հոգուց բաղկացած կազմկոմիտե (դպրոցի դիրեկտորը, ռազմական ղեկավարը, ֆիզկուլտուրայի դասատուն, ավագ ջոկատավարը, կոմսերիտմիության կոմիտեի քարտուղարը, Պայծ-Ավիաքիմի սկզբնական կազմակերպության նախագահը և այլն):

2· Շրջանային, մարզային, երկրային և ռեսպուբլիկական մրցությունները կատարելու համար տեղերում կազմակերպվում են կազմկոմիտեներ կոմերիտմիության կոմիտեի, ժողկրթբաժնի, պրոֆմիության, ֆիզկուլտուրայի և սպորտի գործերի կոմիտեի, Պայծ-Ավիաքիմի, Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունների, տեղական մամուլի ներկայացուցիչներից: Կազմկոմիտեներին կից կազմակերպվում են դատական կոլեգիաներ, բոլոր տեսակի մրցությունների դատավորներից: Գլխավոր դատավորին և դատական կոլեգիային հաստատում է կազմկոմիտեն:

## IV· ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

1940 թվի նոյեմբերի 20-ից պիոներական ջոկատներում և դպրոցներում ծավալվում է նախապատրաստական աշխատանք միջզորոցական մրցությունների համար:

Մրցությունների նախապատրաստման և կատարման ժամանակ պետք է լայն ծավալված լինի ռազմ-ֆիզկուլտուրային աշխատանքը դպրոցներում, պիոներական ջոկատներում, պետք է կազմակերպվեն դասախոսություններ, զրույցներ, որոնք կծանոթացնեն դպրոցականներին մեր Կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի անցյալին և ներկային ու Կարմիր Բանակի առաջնորդների կենսագրություններին:

Պիոներներին և դպրոցականներին մրցումներին նախապատրաստելու համար ներգրավվում են պահեստի հրամանատարներ, ֆիզկուլտուրայի և սպորտի վարպետներ, մանկավարժներ, ծնողներ և այլն: Մրցումների նախապատրաստման բոլոր պարապմունքները, հատկապես հրաձգային և սանիտարական գործից, պետք է կատարվեն միայն հատուկ պատրաստություն ունեցող մեծահասակների ղեկավարությամբ:

## V· ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1· Միջզորոցական մրցումները՝ 1941 թվի հունվարի 1-ից մինչև 1941 թ· փետրվարի 5-ը:

2· Շրջանային մրցումները՝ փետրվարի 15-ից մինչև մարտի 10-ը:

3· Մարզային, երկրային, ավտոնոմ ռեսպուբլիկական մրցումները՝ ապրիլի 20-ից մինչև մայիսի 5-ը:

4· Ռեսպուբլիկական մրցումները՝ հունիսի 25-ից մինչև հուլիսի 10-ը:

5· Համամիութենական մրցումները՝ օգոստոսի 1-ից մինչև 13-ը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ·—Ֆիզկուլտուրայի շրջանային և մարզային մրցումների ժամկետները կարող են փոփոխվել, տեղական կազմկոմիտեների հայեցողությամբ:

## VI· ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Շրջանային, մարզային, երկրային, ռեսպուբլիկական և Համամիութենական մրցումներում առաջնությունը որոշվում

է ինչպես բոլոր տեսակների կոմպլեքսով, այնպես էլ մրցումների առանձին ձևերով։ Յուրաքանչյուր ջոկատի ընդհանուր տեղը որոշվում է այն աչկների գումարումով, որ ստացել են ջոկատի կոմանդաները մրցումներում առանձին տեսակներից և Ֆիզկուլտուրայից (բոլոր մասնակցողների համար)։

Մրցման յուրաքանչյուր տեսակից առաջին տեղի համար տրվում է 1 աչկ, երկրորդ տեղի համար՝ 2 աչկ, երրորդ տեղի համար՝ 3 աչկ և այլն։

Այն ջոկատը, որը կունենա աչկների ամենափոքր գումարը, հանդիսանում է մրցման հաղթանակող։

## VII. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ

Ընդհանուր կոմպլեքսում Միության մեջ առաջին տեղը գրավող ջոկատը պարգևատրվում է Պաշտպանության ժողկոմատի փոխանցիկ մրցանակով՝ կարմիր դրոշով։

Երկրորդ տեղը գրավող ջոկատը պարգևատրվում է ՀամԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ մրցանակով՝ կարմիր դրոշով։

Երրորդ տեղը գրավող ջոկատը պարգևատրվում է Պաչը-Ավիաքիմի Կենտխորհրդի և Կարմիր Խաչի ու Կարմիր Մահիկի ընկերությունների Գործկոմի փոխանցիկ մրցանակով՝ դավաթով։

Չորրորդ տեղը գրավող ջոկատը պարգևատրվում է ՀԱՄԿԽ-ի փոխանցիկ մրցանակով։

Բացի դրանից, այն ջոկատները, որոնք մրցությունների առանձին տեսակներում առաջին տեղերը կգրավեն, կպարգևատրվեն Ֆիզկուլտուրայի և սպորտի գործերի Համամիութենական Կոմիտեի, Պաչը-Ավիաքիմի Կենտխորհրդի և Կարմիր Խաչի ու Կարմիր Մահիկի ընկերությունների Գործկոմի փոխանցիկ մրցանակներով։

Լավագույն անհատական արդյունքներ ցուցաբերած մասնակցողները կպարգևատրվեն պատվոգրով և կրծքանշաններով։



# ՇԱՐԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԲՈԼՈՐ ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## 1. ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

### ԱՆՀԱՏԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ (5—10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ)

Պատանի վորոշիլովյան հրաձիգի ծրագրով։—*Կեցվածք։ դարձումներ՝ «աջ», «ձախ», «ետ դարձ», տեղում և շարժման ժամանակ (առանց զենքի)։*

Գնահատականը նշանակվում է միավորներով։ գերազանց՝ 5, լավ՝ 4, բավարար՝ 3, վատ՝ 2։

## 2. ՇՐՋԱՆԱՅԻՆ, ՄԱՐԶԱՅԻՆ, ԵՐԿՐԱՅԻՆ, ԱՎՏՈՆՈՄ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆՆԵՐԻ, ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄԱՆԴԱՆՆԵՐԻ ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

### ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՄԻ ԿՈՄԱՆԴԱՅԻ ԿԱԶՄՈՎ, ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

Պատանի վորոշիլովյան հրաձիգի ծրագրով։—*Շարվել դարձումներ՝ «աջ», «ձախ», «ետ դարձ» տեղում և շարժման ժամանակ (առանց զենքի)։*

### ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

Վորոշիլովյան հրաձիգի առաջին աստիճանի ծրագրով։—

*ա) շարվել, դարձումներ՝ «աջ», «ձախ», «ետ դարձ» տեղում և շարժման ժամանակ (առանց զենքի)։*

*բ) հրացանի վարարկներ՝ «ուսն ի վար», «ուսին առ», «ոտքի»։*

Գնահատականը կոմանդայի համար նշանակվում է միավորներով, գերազանց՝ 5, լավ՝ 4, բավարար՝ 3, վատ՝ 2։

Ջոկատի գնահատականը շարային նախապատրաստությունից դուրս է բերվում հետևյալ սկզբունքով, օրինակ։

*ա) հրաձիգների և նռնակաձիգների կոմանդան շարային պատրաստությունից ստացել է 5 միավոր,*

բ) ՀՕՔՊ-ի կոմանդան՝ 3,

գ) ՊԱՍՊ-ի կոմանդան՝ 3,

դ) Ռազմական տեղագրության և կապի կոմանդան՝ 4,

ե) Ֆիզկուլտուրնիկների կոմանդան՝ 5, հետևապես ամբողջ կոմանդան չարային նախապատրաստությունից կունենա գնահատական՝ 5+3+3+4+5=20, 20:5=4։

## ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԾՐԱԳԻՐ ԲԱԶՄԱՄՐՑՄԱՆ ԲՈԼՈՐ ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

### ԾՐԱԳԻՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ

ԱՌԱՋԻՆ (ԿՐՏՍԵՐ) ԽՈՒՄԲ (5, 6, 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ)

ՏՂԱՆԵՐ

1. ԵՊԱՊ-ի լիցքը։
2. Նռնակի նետում (500 գրամ)։
3. Թռիչք բարձրություն, վազքով։
4. Դահուկներ 3 կիլոմ. կամ կրոսս՝ վազք 500 մետր (ձյուն չեղած շրջաններում)։

ԱՂՋԻԿՆԵՐ

1. ԵՊԱՊ-ի լիցքը։
2. Նռնակի նետում (500 գրամ)։
3. Թռիչք բարձրություն, վազքով։
4. Դահուկներ 2 կիլոմ. կամ կրոսս՝ վազք 300 մետր (ձյուն չեղած շրջաններում)։

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ (8, 9, 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ)

ՏՂԱՆԵՐ

1. ՊԱՊ-ի առաջին աստիճանի լիցքը։
2. Նռնակի նետում (700 գրամ)։
3. Թռիչք բարձրություն, վազքով։
4. Դահուկներ 5 կիլոմ. կամ կրոսս՝ 1000 մետր (միայն ձյուն չեղած շրջանների համար)։



ԱՂՋԻԿՆԵՐ

1. ՊԱՊ-ի առաջին աստիճանի լիցքը։
2. Նռնակի նետում (700 գրամ)։
3. Թռիչք բարձրություն, վազքով։
4. Դահուկներ 3 կիլոմ. կամ կրոսս՝ 500 մետր (միայն ձյուն չեղած շրջանների համար)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Ռազմ-ֆիզկուլտ մրցության յուրաքանչյուր մասնակիցը պետք է ելույթ ունենա յուրաքանչյուր խմբի համար սահմանված ֆիզկուլտ բազմամրցման բոլոր ձևերից։

## ԲԱԶՄԱՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ՖԻԶԿՈՒԼՏ ԿՈՄԱՆԴԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

### ԾՐԱԳԻՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ

ԱՌԱՋԻՆ (ԿՐՏՍԵՐ) ԽՈՒՄԲ

ՏՂԱՆԵՐ

1. Ազատ շարժումների կոմբինացիա ԵՊԱՊ-ի կոմպլեքսից։
2. Թռիչք բարձրություն, վազքով։
3. Նռնակի նետում (500 գրամ)։
4. Դահուկներ 5 կիլոմ. կամ կրոսս՝ 500 մետր (ձյուն չեղած շրջանների համար)։
5. Վարժություններ պրոստաձողի, զուգափայտի կամ օղակների վրա (ըստ ընտրության) ԵՊԱՊ-ի կոմպլեքսից (երկրորդ խումբ «հանձնված է» գնահատականով)։

ԱՂՋԻԿՆԵՐ

1. Ազատ շարժումների կոմբինացիա ԵՊԱՊ-ի կոմպլեքսից։
2. Թռիչք բարձրություն, վազքով։
3. Նռնակի նետում (500 գրամ)։

4· Դահուկ 2 կիլոմետր կամ կրոսս՝ 300 մետր (ձյուն չեղած շրջանների համար)։

5· Վարժություններ պտուտաձողի, զուգափայտի կամ օղակների վրա (ըստ ընտրության) ԵՊԱՊ-ի կոմպլեքսից (երկրորդ խումբ «հանձնված է» գնահատականով)։

ԵՐԿՐՈՐԴ (ԱՎԱԳ) ԽՈՒՄԲ

ՏՂԱՆԵՐ

1· Աղատ շարժումների կոմբինացիա, գիմնաստիկայի պատանեկական որակավորման 3—4 կարգերի ծրագրի համաձայն։

2· Թռիչք բարձրություն, վազքով։

3· Նռնակի նետում (700 գրամ)։

4· Դահուկներ 10 կիլոմ· կամ կրոսս՝ 1000 մետր (ձյուն չեղած շրջանների համար)։

5· Վարժություններ պտուտաձողի կամ զուգափայտի վրա (ըստ ընտրության) ՊԱՊ-ի առաջին աստիճանի կոմպլեքսից (երկրորդ խումբ)։

ԱՂՋԻԿՆԵՐ

1· Աղատ շարժումների կոմբինացիա, գիմնաստիկայի պատանեկական որակավորման 3—4 կարգերի ծրագրի համաձայն։

2· Թռիչք բարձրություն, վազքով։

3· Նռնակի նետում (700 գրամ)։

4· Դահուկներ 3 կիլոմ· կամ կրոսս՝ 500 մետր (ձյուն չեղած շրջանների համար)։

5· Վարժություններ պտուտաձողի կամ զուգափայտի վրա (ըստ ընտրության) ՊԱՊ-ի առաջին աստիճանի կոմպլեքսից (երկրորդ խումբ)։

1· Արդյունքների գնահատականը կատարվում է աչքների հատուկ աղյուսակով։

2· Ֆիզկուլտ կոմանդաներն ապատվում են բոլորի համար նախատեսված բազմամրցումներից։



3· Կոմանդայի կազմն առաջին խմբի համար՝ 5 տղա, 5 աղջիկ։ Հաշվառքը՝ 4 տղայի և 4 աղջկա լավագույն արդյունքով։

Երկրորդ խմբի համար՝ 5 տղա, 5 աղջիկ։ Հաշվառքը՝ 4 տղայի և 4 աղջկա լավագույն արդյունքով։

## ԾՐԱԳԻՐ ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՌՆԱԿԱՁԳՈՒԹՅԱՆ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1· Մրցումներին մասնակցում են դպրոցականները— պատանի վորոշիլովյան հրաձիգները և առաջին աստիճանի վորոշիլովյան հրաձիգները։ Բացի դրանից, մրցումներին կարող են թույլ տալ մասնակցելու այն դպրոցականներին, որոնք նախապատրաստվում են հրաձգային խմբակներում, բայց դեռևս չեն հանձնել պատանի վորոշիլովյան հրաձիգի և վորոշիլովյան հրաձիգի առաջին աստիճանի նորմաները։

2· Դպրոցական և շրջանային մրցումները հրաձգությունից և նռնակաձգությունից կատարվում են մի ծրագրով, առաջին և երկրորդ խմբերի համար։

3· Փամփուշտներ՝ հայրենական արտադրությունից։

4· Հրացանի ոչ մի կոնստրուկտիվ փոփոխություն չի թույլատրվում։

5· Հրաձգության ճյուղում չի թույլատրվում։

6· Կոմանդայի ընդհանուր գնահատականը կատարվում է ծրագրի բոլոր վարժությունների մեջ գրված տեղերի գումարի հաշվառքով։

### I· ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Մրցումից առաջ դատավորն ստուգում է հրաձիգների գիտելիքները (պատանի վորոշիլովյան հրաձիգի նախապատրաստման ծրագրի պահանջների ծավալով) փոքր կալիբրի հրացանի և РГД—33 նռնակի նյութական մասից։ Ստուգման ժամանակ անբավարար գնահատական ստացած հրաձիգներին մրցումներին մասնակցել չի թույլատրվում։

1. ՀՐԱԶԳՈՒԹՅՈՒՆ

Զենք փոքր կալիբրի հրացան ТОЗ—8 կամ ТОЗ—9: Նշանոցը՝ բաց: Նպատականշան № 9-a թիրախը (փոքրացրած 10 անգամ):

Փամփուշտներ—5 երկու սերիայով (2 կրակոց+3 կրակոց): Տարածություն—25 մետր:

Հրաձգության դրությունը—պառկած, ձեռքից (հրացանի փոկի կիրառումը չի թույլատրվում):

Հրաձգության ժամանակը՝ անսահմանափակ:

Գնահատականը որոշվում է 5 կրակոցի միավորների գումարով:

Կատարման կարգը—դատավորը ցույց է տալիս հրաձգին նպատակակետը և հրաձգության վայրը: Դատավորի հրամանով հրաձիգը պատրաստվում է կրակելու, լցնում է հրացանը և երկու անգամ կրակում: Երկու անգամ կրակելուց հետո, հրաձիգը, դատավորի հրամանով, վեր է կենում, մոտենում թիրախին: Երկու մետր տարածության վրա դիտում է զնդակի առաջացրած անցքերը (դատավորը թիրախի կողքին գրում է ճշգրիտ արժեքը), որից հետո նույն կարգով էլ կատարվում է երկրորդ սերիայի փամփուշտների կրակելը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Այն հրաձիգները, որոնք երկրորդ սերիայի փամփուշտները կրակելիս 18 աչոկից ոչ պակաս արդյունք կտան, կհամարվեն պատանի վորոշիլովյան հրաձիգի նորմաները հանձնած՝ հրաձգությունից:

2. ՆՈՒՆԱԿԱԶԳՈՒԹՅՈՒՆ

Նպատակակետը՝ 3 պատուհան 100 մ. բարձրությամբ և 75 մ. լայնությամբ, դրված գետնից 1—2 մետր բարձրության վրա չամմատային կարգով:

Տարածությունը մինչև առաջին նպատակակետը՝ 8 մետր, մինչև երկրորդը՝ 10 մետր, մինչև երրորդը՝ 12 մետր: Նռնակների թիվը՝ 3 հատ. ժամանակն՝ անսահմանափակ:



Գնահատականը—երեք պատուհանի դիպցնելու համար, հրաձիգն ստանում է 3 աչոկ, երկու պատուհանի դիպցնելու համար՝ 2 աչոկ և մեկ պատուհանի դիպցնելու համար՝ 1 աչոկ:

Կատարման կարգը: Հրաձիգն ստանում է 3 նռնակ և դատավորի հրամանով ծնկի դրությամբ նետում է մեկական նռնակ յուրաքանչյուր նպատակակետին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն հրաձիգները, որոնք մեկից ոչ պակաս նռնակ կդիպցնեն պատուհանին, կհամարվեն որպես պատանի վորոշիլովյան հրաձիգի նորմաները հանձնած՝ նռնակաձգությունից:

## ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Առաջնությունը որոշվում է հրաձիգի հրաձգությունից և նռնակաձգությունից ստացած աչոկների գումարով:

II. ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Մրցումից առաջ դատավորն ստուգում է հրաձգի դիտելիքները (վորոշիլովյան հրաձգի առաջին աստիճանի նախապատրաստության ծրագրի պահանջների ծավալով) 7,62 մմ. հրացանի և ԲՀ հակաոդի նյութական մասից: Ստուգումների ժամանակ անբավարար գնահատական ստացած հրաձիգներին մասնակցել չի թույլատրվում:

1. ՀՐԱԶԳՈՒԹՅՈՒՆ

Զենք—փոքր կալիբրի հրացան ТОЗ—8 կամ ТОЗ—9: Նշանոցը՝ բաց նպատակակետ—թիրախ № 7: Տարածություն —50 մետր: Փամփուշտներ—3 վարժական և 5 հաշվանցման:

Դրությունը կրակելիս—պառկած, ձեռքից (հրացանի փոկի կիրառումը թույլատրվում է):

Ժամանակը կրակելու համար—վարժականների համար 5 րոպե և հաշվանցման 5 կրակոցների համար՝ 5 րոպե:

Գնահատական—5 հաշվանցման կրակոցների աչոկների գումարով:

*Կատարման կարգը—նույնն է, ինչ դպրոցական մրցումների ժամանակ: Թիրախին մոտենալ թույլատրվում է միայն 3 վարժական կրակոցից հետո:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—*40 աչկից ոչ պակաս ունեցող հրաձիգները համարվում են որպես վորոշիչվոյան հրաձիգի առաջին աստիճանի նորմաները կատարած:*

2. ՆՌՆԱԿԱԶԳՈՒԹՅՈՒՆ

*Նպատակակետ—խրամատ 0,5 մետր խորությամբ, մեկ մետր լայնությամբ և 3 մետր երկարությամբ. տարածություն—20 մետր: Նռնակների թիվը 3: Ժամանակը—3 րոպե:*

*Գնահատական — խրամատը 3 նռնակ գցող հրաձիգը ստանում է 3 աչկ, 2 նռնակ նետողը՝ 2 աչկ և 1 նռնակ նետողը՝ 1 աչկ:*

*Կատարման կարգ—հրաձիգը դատավորից 3 նռնակ (կոճղ) ստանալով, մոտենում է խրամատին 20 մետր տարածությամբ ու մեկական նռնակ նետում խրամատ, կանգնած դրությամբ:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—*Խրամատը մեկից ոչ պակաս նռնակ գցող հրաձիգը համարվում է որպես վորոշիչվոյան հրաձգի առաջին աստիճանի նորմաներ հանձնած՝ նռնակաձգությունից:*

## ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

*Առաջնությունը որոշվում է հրաձիգի (կոմանդայի) հրաձգությունից և նռնակաձգությունից ստացած աչկների թվի գումարով:*



# ՀՕՔՊ-Ի ԾՐԱԳԻՐ

## ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

### ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

I ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

*Հակագազի փոխարինումը թունավորող նյութերի մթնոլորտում (կոմանդային): Կոմանդայի կազմը—4 հոգի:*

*Մրցման վայրը: Գազախցիկ, լցված խլորպիկրինի զոլորշիով համակենտրոնացված 0,1—0,2 CM³ на 1 M³:*

*Նյութական մասը: 8 հակագազ աշխատելու համար պետքական CB մթնոլորտում դիմակներով, մարդակցողների դլխի չափով:*

*Ելման դրություն: Մրցողները շարվում են ստարտում, հակագազերը «պատրաստ» դրության մեջ: Յուրաքանչյուր մրցող ունի 2-ական հակագազ: Հիմնական հակագազի պայուսակը՝ ձախ կողմում, պահեստի հակագազը՝ աջ կողմում, պահեստի հակագազի փոկը՝ հիմնական հակագազի փոկի վրա:*

*Հակագազի դրվածքն ստուգելուց հետո դատավորը հրաման է տալիս. «դազեր»: Այս հրամանով մրցողները հանում են հիմնական հակագազերը և դատավորն ստուգում է հանելու կանոնավոր լինելը, թույլատրելով ուղղել շլեմի (դիմակի), ժապավենի և այլ դրությունը, հետո մրցողները մտնում են խցիկը:*

*Խցիկում դատավորը հրաման է տալիս. «պատրաստվել», հետո (1—2 վայրկյանից հետո), «փոխել», «պատրաստվել» և «փոխել» հրամանների մեջ եղած ժամանակի ընթացքում մրցողներն իրավունք չունեն ուղղելու կամ փոխելու հակագազի երեսի մասի դրությունը: Այս կանոնը խախտելու յուրաքանչյուր փորձի համար տույժ է տրվում 3 վայրկյան:*



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ում СССР
Ա. Մասիսյանի անվան
Գրադարան
Գրանցման համար
43405-63

Վայրկենաչափն սկսում են աշխատեցնել «փոխել» հրամանի հետ միաժամանակ: Այս հրամանով բոլոր մրցողներն սկսում են փոխել հակագազերը:

Վարժության կատարումը: Պահեստի հակագազի շլեմը հագնելուց հետո, պարտադիր է արտաշնչել աջ ձեռքի մատներով միացնող խողովակը հուպ տալով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Տվյալ գործողությունը միատեսակ կատարվելուն հասնելու նպատակով, կատարվում է նաև դիմակով հակագազից օգտվելու ժամանակ:

Հակագազը փոխելով և արտաշնչելով, մրցողը ցած է թողնում ձեռքերը: Վայրկենաչափը կանգնեցնում են:

Վերջնական դրություն: Պահեստի հակագազը հագցնել մրցողին. հիմնական հակագազի միացնող խողովակը շլեմի հետ (դիմակի) ազատ կերպով ցած է թողնված:

Մրցողները կանգնում են «զգաստ» դրության մեջ: Դատավորը նշում է թույլ տված սխալները:

Ցցիկից դուրս գալուց հետո, դատավորի «իմ եռևից, քայլով մարշ» հրամանից հետո, դատավորը հրաման է տալիս «հակագազերը հանել» և ստուգում է մրցողների աչքերի գրգռվածության և հագի առկայությունը:

Յուրաքանչյուր մրցողի սխալների համար տույժ է տրվում՝ ժամանակ.

1. Ընկել է կամ գլխին չէ գլխարկը խցիկում—1 վայրկյան.

2. Շլեմի (դիմակի) փոքրիկ թեքում—1 վայրկյան.

3. Մեծ թեքում—2 վայրկյան.

4. Մրցողի դուրս գալը խցիկից մինչև դատավորի «իմ եռևից քայլով մարշ» հրամանը—3 վայրկյան.

5. Հակագազն ուղղելու փորձի համար մինչև դատավորի «հանել հակագազերը» հրամանը—2 վայրկյան:

Հանրագումարային գնահատական: «Գերազանց»՝ եթե հակագազ փոխելը կատարվել է 6 վայրկյանի ընթացքում, «լավ»՝ 8 վայրկյանի ընթացքում, «բավարար»՝ 10 վայրկյանի ընթացքում:



Այս վարժությունը կատարվում է միայն ռեսպուբլիկական և համամիութենական մրցումներում: Դպրոցական, շրջանային և մարզային մրցություններում սրա փոխարեն կատարվում է կոմանդային վարժություն «հակագազ» հագնելը 5—7 դասարանների աշակերտների ծրագրից:

II ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Հակագազի փոխելը ՕՎ մթնոլորտում (անհատական)

Ելման դրությունը, վարժության կատարումը և վերջնական դրությունը նույնն են, ինչ որ կոմանդային մրցման ժամանակ:

Գնահատական—«գերազանց», երբ հակագազը հագել է 5 վայրկյանում, «լավ»՝ 6 վայրկյանում, «բավարար»՝ 8 վայրկյանում:

Սխալների համար նույնքան ժամանակի տույժ է տրվում, ինչ որ կոլեկտիվ մրցումների ժամանակ:

Այս վարժությունը կատարվում է միայն ռեսպուբլիկական և համամիութենական մրցումներին: Իսկ դպրոցական, շրջանային և մարզային մրցումներին, սրա փոխարեն կատարվում է 5—7 դասարանների աշակերտների ծրագրի 2-րդ վարժությունը:

III ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Ախտահանում ձեռքի դործիքով,
ՐԴՊ—1 (կոմանդային),
Կոմանդային կազմը 2 հոգի:

Մրցման վայրը: Հրապարակ՝ պատի կամ ցանկապատի մոտ:

Նյութական մասը: Մի դործիք ՐԴՊ—1, ախտահանման նյութեր, պարկեր աղով և լեղակով, բաժանված 100-ական դրամների, երկու դույլ յուրաքանչյուրը 10-ական լիտրանոց և մի տակառ ջուր:

Ելման դրությունը: Հաշվառքը 25 մետր տարածության վրա ՕՎ «վարակված» վայրից: Պաշտպանական հագուստը և հակագազերը մարտական դրության մեջ: Նյութական մասը՝ հաշվառքից դեպի ձախ 3 մետրի վրա:

Վարժության կատարումը։ Դատավորի «սկսել ախտահանումը» հրամանից հետո, աշխատեցնում են վայրկենաչափը։ Հաշվառքն սկսում է լցնել գործիքը։

Առաջին համարը բաց է անում РДП—1 խուփը, երկրորդ համարը պատրաստում է լուծությունը, դատավորի առաջադրությամբ (մի տոկոսանոց, կես տոկոսանոց և հինգ տոկոսանոց) և լցնում գործիքի մեջ։

Հետո առաջին համարը փակում է գործիքի խուփը, երկրորդ համարն օգնում է առաջինին, որ գործիքն ուսին դնի, որից հետո առաջին համարը գնում է ախտահանման վայրը և սկսում աշխատանքը, իսկ երկրորդը պատրաստում է լրացուցիչ լուծույթ և բերում ախտահանման վայրը։

Ախտահանման տեղամասը. պատ, որի տարածությունն է 24 մետր, 2 մետր բարձրությամբ։

Ամբողջ լուծույթն օգտագործելուց հետո առաջին համարը ձեռքը բարձրացնում է։

Երկրորդ համարը մոտեցնում և օգնում է նրան գործիքը ցած բերելիս և կրկին լցնում է գործիքը։

Վերջնական դրություն։ Ամբողջ լուծույթն օգտագործված է և ցանկապատը ախտահանված։ Դրանից հետո առաջին համարը վերադառնում է ելման դրության վայրը, ինքնացնում գործիքը և զեկուցում ախտահանման ավարտման մասին. «ախտահանումն ավարտեցին»։

Վայրկենաչափը կանգնեցնում են զեկույցը վերջացնելուց հետո։

Սխալների համար տրվում է տույժ.

1. Լուծույթ կաղմել չկարողանալը տոկոսային տեսակետից՝ 30 վայրկյան,

2. Գործիքը լցված է ոչ ցանցի միջոցով և թափվել է՝ 10 վայրկյան,

3. Գործիքը լցրել է առանց ուսից ցած առնելու՝ 10 վայրկյան,

4. Նորմալ տարածությունից հեռացել կամ մոտեցել է 10 սմ.՝ 10 վայրկյան,

5. Ջրհան մեքենան քանդել չկարողանալը, ցանցի



(պուլվերիզատորի) կեղտոտման պատճառները չվերացնելը՝ 30 վայրկյան,

6. Ախտահանման ժամանակ իր վրա լուծույթ թափելը՝ 30 վայրկյան,

7. Ախտահանում ներքևից՝ 10 վայրկյան,

8. Ախտահանումից հետո գործիքում մնացած յուրաքանչյուր բաժակ լուծույթի համար՝ 15 վայրկյան։

Գնահատականը՝ առաջնությունը տրվում է այն հաշվառքին, որը վարժությունը կատարել է ամենակարճ ժամանակում։ «Գերազանց»՝ ախտահանումը կատարվել է 25 րոպեում, «լավ»՝ 27 րոպեում, «բավարար»՝ 30 րոպեում։

Այս վարժությունը կատարվում է միայն ռեսպուբլիկական և Համամիութենական մրցումներում։ Դպրոցական, շրջանային և մարզային մրցումներում դրա փոխարեն կատարվում է «հրկիզող ռումբի հանգցնելը» (կոմանդային) վարժությունը դպրոցականների 5—7 դասարանների ծրագրով։

## IV ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

### Ախտահանում բաշվող գործիքով ВДП (կոմանդայով)

(Միայն ռեսպուբլիկական և Համամիութենական մրցություններում)։

Կոմանդայի կազմը՝ 3 հոգի, որոնք կազմում են ախտահանման հաշվառքը։ Մրցման տեղը՝ բաց հրապարակ հարթ մակերևույթի վրա։

Նյութական մասը՝ 3 կոմպլեկտ։ Պաշտպանական հագուստ, 5 կգ. մի տակառ քլորակրով (ընդօրինակված մանր ավազով, խառնված թեփի հետ, 1/3 ավազ, 2/3 թեփ). մի գործիք ВДП—1, 4 դեղին և 2 կարմիր դրոշակ, 2 վայրկենաչափ և 2 բահ։

Վերջնական դրություն՝ ախտահանման հաշվառքը կազմված է մի տողանով կարմիր դրոշակների և ВДП—1 միջև։ Պաշտպանական հագուստը «մարտական պատրաստու-

թյան» մեջ, ՎԴՊ—1 ձախ թևում, որը նշանակված է երկրորդ կարմիր դրոշակով։ Ավազով տակառը դրված ՎԴՊ—1 դեպի ձախ, 5 մետրի վրա։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գործիքը կարող է ունենալ կատարելագործված անցում խոլոստոյ ընթացքից բանվորական ընթացքի և ընդհակառակը։

Վարժության կատարումը։ Դատավորի «սկսել ախտահանումը» հրամանով, վայրկենաչափն աշխատեցնում են։ Հաշվառքն սկսում է գործիքը լցնել։

Հետո առաջին համարն արձակում և ետ է քաշում գործիքի վերևի խուփը, երկրորդ և երրորդ համարները «քրակրի» տակառից լուծույթը լցնում են գործիքի մեջ։

Գործիքը լցնելուց հետո, առաջին համարը քաշում, տանում է իր առջևից դեպի վարակված տեղամասը և սկսում է ախտահանել։ Ախտահանումը վերջացնելով, գործիքը բերում է վարակված տեղամասի լցնելու տեղը (ելման դրության մոտ) և գործիքին խոլոստոյ ընթացք է տալիս։

Հաշվառքը կանգնում է գործիքից դեպի ձախ մի տողանով։ Այն մոմենտից, երբ հաշվառքը չարվում է (վերջնական դրություն), վայրկենաչափը կանգնեցնում են։

Տեղամասը պետք է ունենա տարածություն 70 մետր երկարությամբ, 1,7 մետր լայնությամբ։

Գործիքը լցնելու տեղից մինչև «վարակված» ՕՎ տեղամասը 25 մետր։

Գնահատականը «գերազանց»՝ եթե ախտահանումը կատարված է 3 րոպեում, «լավ»՝ 4 րոպեում, «բավարար»՝ 5 րոպեում։

Սխալների համար տրվում է տույժ՝ ժամանակ.

1) Յուրաքանչյուր հանցանքի համար (orpex) 30 վայրկյան։

2) ավազը թափելու համար.

ա) «Չվարակված» տեղամասում. մինչև «վարակված» տեղը հասնելը—30 վայրկյան.



բ) Գործիքը լցնելու տարածության վրա— 30 վայրկյան.

3) Վահանները չիջեցնելու համար—30 վայրկյան.

4) Եթե կոմանդայից որևէ մեկը հակագազը հանի, «անբավարար» գնահատական է տրվում.

5) Եթե ախտահանումը կատարվել է վազելով—30 վայրկյան։

Առաջնությունը տրվում է այն հաշվառքին, որն ամենաքիչ ժամանակ ցույց կտա։

## ՀՕՔՊ-Ի ԾՐԱԳԻՐ ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ, ՇՐՋԱՆԱՅԻՆ, ՄԱՐԶԱՅԻՆ, ԵՐԿՐԱՅԻՆ ԵՎ ԱՎՏՈՆՈՄ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

### I ԵՎ II ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

### I ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Հակագազ հագնելը (կոմանդայով)։

Կոմանդայի կազմը՝ 4 հոգի։

Մրցման վայրը—մեծ դահլիճ կամ բաց հրապարակ։

Նյութական մասը — մասնակցողներին 100 տոկոսով ապահովել հակագազերով։ Հակագազի չափը և դիմակն ընտրել ըստ անհատական չափերի։ Վայրկենաչափերը պետք է լինեն դատավորների թվի չափ։

Ելման դրություն — կոմանդան դլխարկներով շարվում է ստարտում, ունենալով հակագազեր «պատրաստ» դրությամբ։

Վարժության կատարում — տրվում է հրաման «Զգաստ», 0,5—1 վայրկյանից հետո տրվում է «գազեր» հրամանը և միաժամանակ գործի դնելով վայրկենաչափը։

Վարժությունը կատարվում է կանգնած, հակագազն օգտագործելու կանոնների համաձայն։

Վերջնական դրություն — հակագազը «մարտական» դրության մեջ, դլխարկը դիմակի վրայից։ Կոմանդայի վեր-

ջին մարդու ձեռներն իջեցնելու մոմենտին վայրկենաչափը կանգնեցնում են։

Գնահատականը — «գերազանց»՝ երբ հակազազը հաղնում է 3 վայրկյանում, «լավ»՝ մինչև 4 վայրկյանում, «բավարար»՝ մինչև 5 վայրկյանում։

Կոմանդայի յուրաքանչյուր մասնակցի սխալի համար որպես տույժ, հաշվվում է ժամանակ. 1) եթե զլխարկն ընկնի՝ 1 վայրկյան, 2) դիմակի ակնոցի փոքրիկ թեքվածքի համար՝ 1 վայրկյան, 3) մեկ կամ ավելի մասնակցողների դիմակի ակնոցի մեծ թեքվածքի համար՝ «անբավարար» ամբողջ կոմանդային, 4) հակազազի անվուլթ պահելու, կեղտոտ և պատռված պայուսակի, երիզ, կոճակներ չլինելու համար՝ 2 վայրկյան։

## II ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Հակազազի անհատական հագնելը։ Ելման դրությունը, վարժության կատարումը և վերջնական դրությունը նույնն է, ինչ որ կոմանդային վարժության ժամանակ։

Գնահատական — «գերազանց»՝ հակազազը հագնել 2 վայրկյանում, «լավ»՝ 3 վայրկյանում և «բավարար»՝ 4 վայրկյանում։ Սխալների համար, որպես տույժ ժամանակ է հաշվվում նույնքան, որքան կոմանդայի վարժության ժամանակ։

## III ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

«Հրկիզող ռումբի» հանգցնելը (կոմանդայով)։ Կոմանդայի կազմը՝ 4 հոգի։

Մրցման վայրը — բաց հրապարակ (չարմածքները և կառուցումները 100 մետրից ավելի մոտ չպետք է լինեն)։

Նյութական մաս — 4 հակազազ, 20 տոպրակ, յուրաքանչյուրի մեջ մոտ 2—3 կիլոգրամ ավազ, չորս թիթեղյա խուլի (ծխազլան կամ նման բան) նավթ կամ մազութ, երկու բահ, 7 գունավոր դրոշակ (2 կապույտ, 4 կարմիր և մեկ սպիտակ)։ Բացի դրանից, նախազգուշության նպատակով մոտերքում դրվում են 2 հրշեջ և մի արկղ ավազ, հրդեհ ծագելու դեպքի համար։

Մրցման վայրի սարքավորումը — հրապարակի վրա կենտրոնից (սպիտակ դրոշակ) դեպի հարավ և հյուսիս չափվում է 30 մետր տարածություն, որտեղ դրվում են մեկական կապույտ դրոշակ, որը նշում է մրցմանը մասնակցողների ելման կետը։ Դրոշակների մոտ դրվում են 2-ական տոպրակ ավազով։ Հետո կենտրոնից դեպի հյուսիս—արևելք, հարավ—արևելք, հարավ—արևմուտք և հյուսիս—արևմուտք չափվում է 9 մետր տարածություն և դրվում են 1-ական կարմիր դրոշակ և ավազով լցված 3-ական տոպրակ։ Այս դրոշակները որոշում են այն տեղերը, որտեղից մրցողները հանգցնում են հրդեհի օջախները։ Դրանից հետո չափվում են երկու մետր տարածություն դեպի հյուսիս, արևելք, հարավ և արևմուտք, որտեղ դնում են թիթեղյա խուլիր, նավթով ներծծված խծուծով (պակլյա), «հրդեհի օջախներ» ստեղծելու համար։ Հանգցնելու տարածությունը 7 մետր։

Ելման դրություն — կոմանդան դասավորվում է 2 կետում, 2-ական հոգով։ Առաջին կետը գտնվում է հյուսիսային ելման դիրքերում, իսկ երկրորդը՝ հարավային ելման դիրքերում։ Յուրաքանչյուր մրցողի մոտ կա ավազով լցված 2 տոպրակ։

Հակազազերը «պատրաստ» դրության մեջ։

Վարժության կատարումը — դատավորի «ուշադրություն» հրամանով, մրցողները «զգաստ» դրություն են ընդունում, կանգնելով երեսը դեպի կենտրոնը։ Միաժամանակ վառում են խուլիրի խծուծը։ Խծուծը վառելուց հետո, դատավորը հրաման է տալիս «հանգցնել կրակը»։ Մրցողները հակազազը «մարտական դրության» մեջ են դնում և վազում «հրդեհի օջախները» հանգցնելու վայրը (կարմիր դրոշակների մոտ)։

Մրցողներից յուրաքանչյուրն ունի 5 տոպրակ, որոնցով կարող է հանգցնել «հրդեհի օջախներից» որևէ մեկը։

Կարմիր դրոշակից անցնելը (ավելի մոտիկ «հրդեհի օջախին») մասնակցողներին չի թույլատրվում:

Վերջնական դրություն — բոլոր օջախները պետք է հանգցված լինեն. կրակ չպետք է լինի: Հրդեհի վերջին օջախի հանգցնելը վերջացնելուց հետո, վայրկենաչափն անջատել: Ժամանակը գրանցման ենթարկելով նշվում է, թե քանի տոպրակ է օգտագործվել:

Գնահատական—«գերազանց»՝ երբ հանգցված են բոլոր օջախները, օգտագործելով 8 տոպրակից ոչ ավելի, «լավ»՝ նույնը, երբ օգտագործվում են 10 տոպրակից ոչ ավելի, «բավարար»՝ երբ օգտագործվում են 10—16 տոպրակ:

Տեղերը կոմանդաների մեջ բաժանելիս, եթե հավասար քանակով տոպրակներ են օգտագործվել, «հրդեհի օջախները» հանգցնելու արագությունը հաշվում են այսպես. որքան քիչ ժամանակ գործադրված լինի, այնքան լավ տեղ է հատկացվում կոմանդային:

Յուրաքանչյուր մասնակցողի սխալի համար կոմանդան տուգանվում է, ավելացնելով օգտագործված տոպրակների թիվը հետևյալ հաշվով.—1) կարմիր դրոշակից օջախի մոտ անցնելու համար՝ 2 տոպրակ, 2) գլխարկը կորցնելիս՝ 1 տոպրակ, 3) հակագազը հանելու դեպքում տրվում է «անբավարար» գնահատական, 4) «ուշադրություն» և «հանգցնել կրակը» հրամանների միջև հակագազն ուղղելու փորձի համար՝ 1 տոպրակ, 5) յուրաքանչյուր մրցողի համար, որը չի մասնակցում հրդեհի օջախը հանգցնելուն, ավելացնել 2 տոպրակ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Դպրոցական և շրջանային մրցումներին «հրկիզող ռումբերի» հանգցնելու տարածությունը՝ 5 մետր:

## IV ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

«Հրկիզող ռումբերի» անհատական հանգցնելը:

Մրցման տեղը և նյութական մասը — նույնը, ինչ որ կոմանդային մրցումներում;



Վարժության կատարումը և տուգանային աշխատանքի ավելացումը նույնն է ինչ որ կոմանդային մրցումներում:

Գնահատական—«գերազանց»՝ երբ «հրդեհի օջախները» հանգցված են ոչ ավելի քան 2 տոպրակով, «լավ»՝ 3 տոպրակով, «բավարար՝ 4 տոպրակով: Չորս տոպրակից ավելի օգտագործելու դեպքում կամ երբ օջախը չի հանգցվում, «անբավարար» գնահատական է տրվում:

Ժամանակը հաշվում են այնպես, ինչպես կոմանդային մրցումներում:

# ԾՐԱԳԻՐ
# ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՊԻ

## ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ—ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

### ԱՌԱՋԻՆ ԹԵՄԱ: «ԲԱՐՏԵԶ ԿԱՐԴԱԼԸ»:

*Առաջադրանք.*—Գիտենալ թվական և գծային մասշտաբը և ռազմ-տեղագրության պայմանական նշանները: Կարողանալ սահուն կերպով կարդալ քարտեզը:

*Մրցման պայմանները.*— Մրցումը կատարել դասարանում: Օգտվել ռուսական հին չափերով նկարված քարտեզներից, ինչպես և նոր քարտեզներից մետրական չափերով: Կարդալ միայն խոշոր մասշտաբ ունեցող քարտեզները:

### ԵՐԿՐՈՐԴ ԹԵՄԱ: «ՎԱՅՐԻ ԴԻՏՈՒՄԸ»:

*Առաջադրանք.*— Կարողանալ ճանապարհին նկատել և հիշել բնորոշ, աչքի ընկնող տեղական առարկաները (օրինակ ճանապարհների խաչմերուկները, ջրանցքները, փոսերը և այլն):

*Մրցման պայմանները.*— Մրցումը կատարել դաշտում: Մրցողներին տալ առաջադրանք և շարժվելու մարշրուտ (3 կիլոմետրից ոչ ավելի): Վերադարձից հետո պահանջել բանավոր զեկուցում բոլոր նկատածների մասին:

ԵՐՐՈՐԴ ԹԵՄԱ։ «ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆ ԱՉՔԻ ՉԱՓՈՎ»։

*Առաջադրություն։*— Գիտենալ այն միջոցները, նշանները և ձևերը, որ պետք է գործադրել տարածությունն աչքի չափով որոշելու ժամանակ։

Կարողանալ ճշտորեն որոշել տարածությունն աչքի չափով մինչև 800 մետրի սահմանում։

*Մրցման պայմանները։*—Մրցումը կատարել բացառապես դաշտում։

ՉՈՐՐՈՐԴ ԹԵՄԱ։ «ԱՉՔԻ ՉԱՓՈՎ ԳԾԵԼԸ»։

*Առաջադրանք։*— Գիտենալ աչքի չափով գծելու հիմնական ձևերը։

Կարողանալ կարճ ժամանակամիջոցում աչքի չափով կազմել ոչ-մեծ տեղամասի ուրվանկարը։

*Մրցման պայմանները։*— Մրցումները կատարել դաշտում։ Մրցողներին տալ պարզորոշ առաջադրանք և որոշ տեղամաս՝ գծելու համար (չրջագծի չառավիղը երկու կիլոմետրից ոչ ավելի)։ Գծելու համար թույլատրվում է ունենալ կողմնացույց, մատիտ, ռետին, մի թերթ լավ թուղթ, մասշտաբի (նշանոցային) քանոն և թղթակալ—գծագրոց (ֆաներայից կամ ստվարաթղթից)։ Գծելը պետք է կատարել 2—3 ժամում։

## ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

ԱՌԱՋԻՆ ԹԵՄԱ։ «ՌԱՐՏԵԶ ԿԱՐԴԱԼԸ»։

*Առաջադրանք։*— Գիտենալ մասշտաբները, ռազմ-տեղագրության պայմանական նշանները, վայրի ռելյեֆը և նրա արտահայտությունը։

Կարողանալ թվական մասշտաբից անցնել գծային մասշտաբի և ընդհակառակը։ Որոշել քարտեզի մասշտաբը, եթե տվյալ քարտեզի թերթի վրա չկա նրա մասշտաբը, քարտեզով որոշել կետերի և աննշմարելի դաշտերի տեսանելիությունը, սահուն կարդալ քարտեզը։

*Մրցման պայմանները։*— Մրցումը կատարել դասարանում։ Օգտվել ռուսական հին չափերով գծագրված քարտեզներից, ինչպես և մետրական չափերով գծագրված նոր քարտեզներից։ Կարդալ միայն խոշոր մասշտաբ ունեցող քարտեզները։

ԵՐԿՐՈՐԴ ԹԵՄԱ։ «ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ ՎԱՅՐՈՒՄ ՔԱՐՏԵԶՈՎ, ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑՈՎ ԵՎ ԺԱՄԱՑՈՒՅՑՈՎ»։

*Առաջադրանք։*— Կարողանալ քարտեզով որոշել իր կանգնած տեղը, քարտեզի վրա գտնել վայրում նշված առարկաները և ընդհակառակը, առաջ շարժվել քարտեզի վրայով ճանապարհով և առանց ճանապարհների, որոշել հորիզոնի կողմերը կողմնացույցով և դրայանի ժամացույցով։

Գիտենալ կողմնացույցի կազմությունը։

*Մրցման պայմանները։*— Մրցումը կատարել միայն դաշտում։

ԵՐՐՈՐԴ ԹԵՄԱ։ «ՇԱՐԺՈՒՄ ԱԶԻՄՈՒՏՈՎ»։

*Առաջադրանք։*— Կարողանալ շարժումները կատարել կողմնացույցի օգնությամբ (ազիմուտով), առաջադրված ուղիղ ուղղությամբ։

*Մրցման պայմանները։*— Մրցումները պետք է կատարել դաշտում, վայրի փակ տեղամասերում։ Ազիմուտով շարժվելը 2 կիլոմետրից ոչ ավելի տարածության վրա, թույլատրվում է միայն մթության պայմաններում։ Կարելի է օգտվել լուսատու կողմնացույցով։

ՉՈՐՐՈՐԴ ԹԵՄԱ։ «ՄԱՐՇՐՈՒՏԻ ՈՒՐՎԱԳԻԾԸ»։

*Առաջադրանք։*— Կարողանալ կազմել մարշրուտի ուրվագիծը (ավանդությամբ)։

*Մրցման պայմանները։*— Մրցումը կատարել դաշ-

տում։ Շարժման մարշրուտը պետք է լինի 2 կիլոմետրից ոչ ավելի։ Մրցողներին անպայման ժամանակ է տրվում պատրաստվելու և փաստաթուղթ տալու համար (մաքսիմում 3 ժամ, առանց հաշվի առնելու ճանապարհի տեղամասի կմախք կազմելը)։

*Ռազմա-տեղագրական մրցումների արդյունքների գնահատությունը.*— Գերազանց (5)՝ բոլոր 4 առաջադրանքների ճիշտ ու արագ կատարումը։ Լավ (4)՝ բոլոր 4 առաջադրանքների կատարումը ճիշտ՝ բայց դանդաղ։ Բավարար (2)՝ առաջադրանքների հիմնականում ճիշտ կատարումը, երբ մեկից ոչ ավելի կոպիտ սխալ կա։ Վատ (0)՝ առաջադրանքներից մեկի չկատարելու դեպքում։

## ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ—ԿԱՊԻ ԳԾՈՎ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

### ԹԵՄԱ։ «ԴՐՈՇԱԿՆԵՐՈՎ ԱԶԴԱՆՇԱՆ ՏԱԼԸ ՄՈՐԶԵԻ ԱՅԲՈՒԲԵՆՈՎ»։

*Առաջադրանք.*— Գիտենալ պահակակետի աշխատանքի կանոնները, պահակակետի (դիմակավորում) տեղն ընտրելը և կապի մեջ մտնելը։

Կարողանալ արագ փոխանակվել դրոշադրամներով մորզեի այբուբենով։

*Մրցման պայմանները.*— Կոմանդան բաժանվում է երկու մասի, յուրաքանչյուր պոստում երկու հոգի։ Դիմակավորված պոստերը տեղավորվում են կտրված վայրում իրարից 400 մետր տարածության վրա, պահակակետերի տեղը ցույց է տալիս դատավորը։ Մրցմանը մասնակցողները, հաղորդման վայրերն ընտրելով, զեկուցում են իրենց պատրաստականության մասին։ Դատավորը հանձնում է պահակակետին դրոշադրամ հաղորդելու համար և նշում ժամանակը։ Յուրաքանչյուր մասնակցող պետք է հաղորդի մեկ դրոշադրամ, բաղկացած 25 խմբից, յուրաքանչյուր խումբը բաղկացած է 5 նշանից (տառից)։ Ուրեմն, 25 խումբը կազմում է 125 նշան (տառ)։



Կոմանդայի աշխատանքը (2 պահակակետերը) դասավորվում են այսպես.

ա) Հաղորդող պահակակետ՝ մեկը թելադրում է տեքստը, մյուսը հաղորդում է։

բ) Ընդունող պահակակետ՝ մեկն ընդունում է, մյուսը՝ գրում։

Աշխատանքը կատարվում է մի ժամից ոչ ավելի։ Դրոշադրամների փոխանակման ընդհանուր ժամանակի մեջ մտնում են կանչելը, առաջարկությունները, համաձայնությունն ստանալը, հաղորդումը և ընդունելը։

Դրոշի չափը պետք է լինի 40×50 սանտիմետր, կոթը՝ 70—80 սանտիմետր։ Դրոշները կարող են լինել կարմիր, սպիտակ և դեղին։

*Կապի մրցման արդյունքների գնահատությունը.*—Գնահատականը կատարվում է ըստ դրոշադրամի անհատական և կոմանդային հաղորդման արագության։ Գերազանց (5)՝ երբ տեքստն աղավաղված է 1 տոկոսով։ Լավ (4)՝ երբ տեքստն աղավաղված է 2 տոկոսով։ Բավարար (2)՝ երբ տեքստն աղավաղված է 3 տոկոսով։ Վատ (0)՝ երբ տեքստն աղավաղված է 4 տոկոսով։

## Ծ Ր Ա Գ Ի Ր

### ՌԱԶՄԱ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ

(Դպրոցական, ռայոնական, մարզային, երկրային և ռեսպուբլիկական մրցումների համար)

5-րդ, 6-րդ, 7-րդ դասարանների կրտսեր խմբակների

### ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

*Առաջին օգնություն դանդի աջ դաղաթոսկրի, փափուկ ծածկույթի վիրավորման դեպքում ու «վիրավորվածին» ձեռքով դուրս բերումը 25 մետրի վրա։*

## ՄՐՑՄԱՆ ՎԱՅՐԸ

Շենք կամ բարձր հրապարակ ոչ պակաս 40 մետր երկարությամբ:

## ՆՑՈՒԹԱԿԱՆ ՄԱՍ

Բոլոր մրցողների մոտ անձնական հակազդեր, դրանից բացի պահեստային հակազդեր 2-րդ և 4-րդ համարների մոտ, իսկ սան-սումկան առաջին համարի մոտ (օղակի հրամանատար)· հագուստն ըստ ցանկության:

## ԵԼՄԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Օղակը ստարտի վրա կանգնում է երկուական այունով: Ստարտից 5 մետրի վրա, իրարից 2-ական մետր հեռու պառկած են երկու «տուժողներ» անդդա դրությամբ· նրանցից ամեն մեկի մոտ վերք՝ դանդի աջ դաստակի փափուկ ծածկութային մասից:

## ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ

«Օգնություն» հրահանգով օղակը վազքով ուղևորվում է դեպի «վիրավորվածները», միաժամանակ օգնություն է ցույց տրվում երկու «տուժածներին» այսինքն առաջին և երրորդ համարները մեկին են օգնություն ցույց տալիս, իսկ երկրորդն ու չորրորդը մյուսին:

«Տուժածի» մոտ վազելով առաջին համարը սան-սումկայից հանում է վիրակապական, անհատական ծրարը (քաղաքացիական տիպի) և վերքի վրա դնում է ասեպտիկական խաչաձևային վիրակապ:

Այդ նույն ժամանակ 3-րդ համարը, աջ ձեռքը տանում է «տուժածի» թիակների տակ, կիսաբարձրացնում է նրա գլուխը և նրան պահում է ամբողջ ժամանակ, մինչև որ առաջին համարը չվերջացնի վիրակապումը: Վիրակապ դնելը վերջացնելուց հետո, առաջին համարի հրահանգով «հիվանդի մոտ ձեռքերով դուրս բերելու համար» առաջին համարը կանգնում է հիվանդի գլխի մոտ, իսկ 3-րդ համարը ոտների մոտ, որից հետո առաջին համարը մոտենում է իր ձեռքը ծալած արմունկով թեի տակ, իսկ երրորդը մեջքով կանգնելով հիվանդի ոտների մեջտեղ, վերջինս բռնում է նրա ծնկներից:

«Բարձրացնել» հրահանգով՝ երկու համարները վիրավորվածին բարձրացնում են—այսինքն առաջին համարը չպետք է իր ձեռքերը խաչաձև վիրավորվածի կրծքի վրա:

«Քայլով մարշ» հրահանգով՝ առաջին և երրորդ համարները վիրավորվածին դուրս են բերում մինչև ֆինիշ՝ 25 մետր հեռավորության վրա:

Տեղափոխման ընթացքում առաջին համարը պետք է հետևի նրան, որպեսզի վիրավորվածի ծնոտը չհենվի կրծքի վրա: Հետևապես երկրորդ «վիրավորվածին» օգնության աշխատանքը կատարում են երկրորդ և չորրորդ համարները:

## ՎԵՐԶՆԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Վարժությունը համարվում է կատարված երբ երկու վիրավորվածներին դուրս են բերում ֆինիշի գիծը:

Վայրկենաչափը բաց է թողնվում «օգնություն» հրահանգով, ժամանակը հաշվվում է յուրաքանչյուր զույգին առանձին-առանձին: Վայրկենաչափը կանգնեցվում է, երբ առաջին և երկրորդ համարները, որոնք գնում են վերջից անցնում են ֆինիշի գիծը:

## ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

«Գերազանց»՝ եթե վարժությունը կատարված է, որակապես գերազանց, երկու րոպեի ընթացքում:

«Լավ»՝ երկուս ու կես րոպե:

«Բավարար»՝ երեք րոպե:

«Անբավարար»՝ երեք րոպեից ավելի:

Սիալների համար հաշվարկվում է ժամանակը՝

1· Անհատական ծրարի ընդունումը բացելուց հետո՝ 1 րոպե·

2. Թույլ կամ ուժեղ վիրակապի դնումը՝ 30 վայրկյան:

3. Վիրավորվածին ձեռքերի վրա փոխադրելիս, վիրավորվածի կրծքի վրա ձեռքերի խաչաձևման դեպքում՝ 20 վայրկյան.

4. Վիրավորվածին փոխադրելու ժամանակ վազք՝ 30 վայրկյան:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Երկրորդ և չորրորդ համարներն օգտագործում են առաջին համարի սան-սումկայի վիրակապական մատերիալները:

ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

«Առաջին օգնություն»՝ զարկերակային արնահոսության և ֆոսֆորային այրվածքի դեպքում:

ՄՐՑՄԱՆ ՎԱՅՐԸ

Մեծ չենք կամ բաց հրապարակ, ոչ պակաս 40 մետրից:

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԱՍ

Ամեն մի մրցողի մոտ, անձնական հակագազեր, բացի դրանից երկրորդ և չորրորդ համարների մոտ պահեստային հակագազեր. («տուժածներ»-ի համար): Առաջին համարի մոտ սան-սումկա, հագուստն ըստ ցանկության:

ԵԼՄԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Ստարտի վրա օղակը կանգնում է երկուական այունով, հակագազերը «պատրաստ» դրությամբ, երկու «տուժածներ» ստարտից 5 մետր հեռավորության վրա, իրարից երկու մետր հեռու մեջքի վրա պառկած, նրանցից ամեն մեկն ունի վերք աջ բազուկի մեջին երրորդում, զարկերակային արնահոսությամբ և աջ սրունքի վրա, փոքր ֆոսֆորային այրվածք:

«Գազ» հրահանգով, օղակը հակագազերը թերում է մարտական դրությամբ:



ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ

«Օգնություն» հրահանգով մրցողները վազքով ուղևորվում են դեպի «տուժածները». օգնություն ցույց է տրվում երկու «տուժածներին» միասին՝ այսինքն առաջին և երկրորդ համարներն օգնություն են ցույց տալիս մեկին, իսկ երրորդ, չորրորդը մյուսին:

Առաջին համարը վազելով «տուժածի» մոտ, նրան դնում է ոլորում աջ բազուկի վրա, նախօրոք ոլորման տակ դնելով, մառլայի 3—4 ծալքային ծածկույթ:

Միաժամանակ երկրորդը հագցնում է «տուժածին» հակագազ, որից հետո 5 տոկոսային պղնձարջասպային լուծույթով թրջում է մառլան և դնում է այնտեղ, որտեղ այրվում է ֆոսֆորային կտորը, որից հետո դնում է խոնավացրած վիրակապ, նույն լուծույթով, սրունքի այրված մասի վրա:

Առաջին համարը բաց է անում անհատական վիրակապական ծրարը (քաղաքացիական տիպի), դնում է վիրակապ աջ բազուկի վերքի վրա:

Առաջին օգնությունը ցույց տալուց հետո «տուժածին» երկու օղակներն օգնում են նրան զգուշությամբ բարձրացնում և կատարում են «բարդ կողպեք» (առաջին համարի հրահանգով «բարդ կողպեք») և «տուժածին» ձեռքի վրա տեղափոխում են դեպի ֆինիշ 25 մետր հեռավորության վրա:

Հետևապես երրորդ և չորրորդ համարները օգնություն են ցույց տալիս երկրորդ տուժածին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 1. Վիրակապ դնելու դեպքում չի պահանջվում ամբողջ վիրակապի ծախսումը, անհրաժեշտ է միայն կատարել լրիվ հուսալի վիրակապ:

2. Երրորդ և չորրորդ համարները, առաջին օգնության համար, օգտագործում են, առաջին համարի սան-սումկայի մատերիալները:

Ֆինիշին մոտենալով օղակայինները զգուշությամբ տուժածին իջեցնում են աթոռի վրա և բարձրացնում են աջ ձեռքը:

Ժամանակը հաշվվում է ամեն մի զույգի համար առանձին:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

«Գերազանց»՝ եթե վարժությունը կատարում են գերազանց որակով՝ 2 բոպե:

«Լավ»՝ երկուս ու կես բոպե:

«Բավարար»՝ երեք բոպե:

«Անբավարար»՝ երեք բոպեից ավելի:

1. Ոլորման թույլ ոլորումը (զարկի չոչափումով)՝ 20 վայրկյան.

2. Թույլ կամ չափից ավելի ուժեղ վիրակապի դնումը՝ 30 վայրկյան.

3. Վիրակապի ընկնումը՝ 20 վայրկյան.

4. Վիրակապի վերջավորության չամրացումը՝ 10 վայրկյան.

5. «Վիրավորվածին» դուրս բերելու դեպքում վազք՝ 30 վայրկյան.

6. «Տուժածի» հակազդի դիմակի ոչ մեծ թեքվածության դեպքում՝ 3 վայրկյան:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1. Սարքի վրա վարժությունը կատարելուց առաջ դատական կոլեգիան ստուգում է մրցողների մոտ եղած նյութական մասերը:

2. Եթե տուժածին չի հագցվում հակազազ, կամ դիմակի մեծ թեքվածություն է ունենում, օղակը տանում է «անբավարար» գնահատական (3,5 բոպե):

Համամիութենական ռազմ-ֆիզկուլտ մրցությունների ըստ սանիտարական պաշտպանության վարժությունների բովանդակությունը կրտսեր կոմանդանների համար, իր ժամանակին կհայտնվի Կազմ. Կոմիտեին;





(Դպրոցական, ռայոնական, մարզային, երկրային, ռեսպուբլիկական և Համամիութենական մրցությունների համար)

(8-րդ, 9-րդ, 10-րդ դասարանների ավագ խմբակների)

Ավագ խմբակների ռազմ-սանիտարական հատվածի մրցությունների հիմքում դրված խնդիրներն են՝

1. Ստուգել ավագ դասարանների ունակությունները, որպես ՊԱՊ-ի նշանակիրներ, ցույց տալու մինչ բժշկական ինքնօգնությունը և փոխադարձ օգնությունը:

2. Ստուգել նրանց ունակությունը, կողմնորոշվելու մինչ բժշկական օգնության ընութագրող հարցերում, կախված վերքի վնասման ուժից և տեսակից:

3. Ստուգել նրանց ունակությունը, կազմակերպելու վիրավորվածներին կամ դաղերով թունավորվածներին վնասված օջախից դուրս բերումը ձեռքերի վրա կամ պատդարակով, և բեռնել տուժածին պատդարակով տրանսպորտի վրա:

Մասնագիտական ըստ ռազմ-սանիտարական մրցումների կոմպլեքսին մասնակցում են աղջիկներն ու տղաները 8-րդ, 9-րդ և 10-րդ դասարաններից:

Վարժությունների բովանդակությունն ավագ խմբակների, տղաների և աղջիկների համար՝

Մինչ բժշկական օգնություն վիրավորվածներին և գազերով թունավորվածներին, վնասված օջախից նրանց դուրս բերումը և վիրավորվածներին ու գազերով թունավորվածներին խնամքը, ինքնօգնություն և փոխադարձ օգնություն դաշտային պայմաններում:

Հարցեր, որոնք ենթակա են ուսումնասիրման մրցումների պատրաստման ժամանակաշրջանում:

1. Կարողանալ Ռազմական և Քաղաքացիական տիպի անհատական ծրարով վերքերի վրա վիրակապ դնել:

2. Կարողանալ վերքերի պաշտպանությունն ասեպտիկային և անտիասեպտիկային վիրակապումներով (ասեպտիկ-

բային, ութաձև, ակաձև, պարսատիկային և գլխակապով վիրակապեր)։

3· Կարողանալ կանգնեցնել արնահոսությունը ժգուտով և ոլորումով։

4· Կարողանալ ցույց տալ առաջին օգնություն բաց և փակ կոտրվածների դեպքում։

5· Կարողանալ ցույց տալ մինչ բժշկական օգնություն, դաղերով թունավորվածին։

6· Կարողանալ սողալով մոտենալ տուժածին, հաղցնել նրան հակադաղ։

7· Կարողանալ օգտագործել անհատական հակաքիմիական ծրար։

8· Կարողանալ տուժածին դուրս բերել վնասված օջախից ձեռքերի վրա և պատգարակով ու նրա բեռնումը տրանսպորտի վրա։

9· Կարողանալ ցույց տալ օգնություն այրվածքի և ցրտահարման դեպքում։

10· Գիտենալ հիվանդի խնամման կանոնները, իմանալ կատարել արհեստական շնչառություն և կիրառել բժշկի կողմից նշանակված հասարակ նշանակումները (պրոցեդուրա)։

Մրցման անցկացման կարգը հետևյալն է՝

1· Ռազմա-սանիտարական ավաղ խմբակի կոմանդան պետք է վարժությունն անցնի ըստ բոլոր վարժությունների՝ հաստատված տղաների և աղջիկների համար։

2· Այնուամենայնիվ մրցողին հաշվետու վարժության բովանդակությունը հայտնվում է միայն մրցումներն սկսելուց առաջ (ստարտի վրա) դրան համապատասխան մշակվում են խնդիրներ, համապատասխանելով նախատեսված վարժություններին։

3· «Գերազանց» գնահատական տրվում է խնդիրը արագ, մտածված և բացարձակ ճիշտ լուծելու դեպքում. «լավ»՝ արագ և հիմնականում խնդրի ճիշտ լուծման դեպքում. «բավարար»՝ դանդաղ, բայց հիմնականում խնդրի ճիշտ



լուծման դեպքում. «անբավարար»՝ խնդիրը սխալ լուծելու դեպքում։

4· Խնդրի լուծման ժամանակը հաշվվում է վայրկենաչափով։

Կոմանդան կամ առանձին մրցողները, որոնք ցույց են տալիս լավագույն ժամանակի ընթացքում խնդրի բացարձակ ճիշտ լուծումը, գրավում են առաջին տեղը։

---

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀԱՍՌ-ԻՆ ՍՍՌ
Ա. ԱԼ. Ա ՄԵՍՐՈՊԻ ԱՆՎԱՆ

Ռուսերենից թարգմանությունը խմբագրեց Ն. Հարությունյան
Թարգմ. Հ. Հայրապետյան
Տեխ. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Հ. Զրաղացպանյան

Պատվեր № 368, заказ № 368
Տիրաժ 2000, тираж 2000
Հանձնվել է արտադրության 12/XII 1940 թ.
Ստորագրվել է տպագրելու 28/XII 1940թ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան,
Երևան, Ալլահվերդյան № 65
Типография Гос. изд. полит. литературы, Ереван, Аллавердян № 65

ՎՖ 2140

ՀՀ Ազգային գրադարան
NL0194545

ш.1
ф.1
15 к
1898

# ПРОГРАММА И УСТАВ

ВСЕСОЮЗНЫХ
ВОЕННО-ФИЗКУЛЬТУРНЫХ СОРЕВНОВАНИЙ
ПИОНЕРОВ И ШКОЛЬНИКОВ В 1941 ГОДУ

Издание ЦК ЛКСМ Армении.
Ереван ● 1940